«Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻՆ

Երեսունութ տարի առաջ էր։ Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Կոստանդնուպոլսից Հայաստան եկավ մաեստրոն եւ փորձեց, պետական ակադեմիական երգչախմբի միջոցով, նոր որակ ու կատարելություն հաղորդել հայ երգչախմբային արվեստին։

Դժվարին, բայց եւ երախտաշատ գործը շուտով տվեց իր անդրանիկ պտուղները։ Այսօր արդեն այսպես կարելի է խոսել վաստակաշատ մաեստրո Հովհաննես Չեքիջյանի մասին. ավելի քան երեք հազար համերգներ Հայրենիքում, նախկին Խորհրդային Միության շատ ու շատ քաղաքներում եւ արտասահմանյան երկրներում։ Այսպիսին է խմբավար եւ դիրիժոր, ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր Հովհաննես Չեքիջյանի ստեղծագործական վաստակը։

Շուրջ չորս տասնամյակ առաջ, 1961 թվականին, ստանձնելով Հայաստանի պետական երգչախմբի ղեկավարությունը, մեծ ջանքեր գործադրեց՝ երգչախմբի կատարողական մակարդակը միջազգային չափանիշներին հասցնելու, երգացանկը հարստացնելու համար։ Գեղարվեստական ուրույն մտածողության, կատարողական բարձր վարպետության շնորհիվ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբն ստեղծագործական մեծ նվաճումների հասավ՝ ամենուր տարածելով Կոմիտասյան հարուստ ավանդներով սրբագործված հայկական երգարվեստի համբավը։

Վաստակաշատ երաժիշտն ու քաղաքացին այսօր բոլորել է իր կյանքի 70-ամյակը։ Երախտագետ ժողովուրդն ի պատշաճի նշեց այդ տարեդարձը։ Նախ մայրաքաղաքի «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ հոբելյարին նվիրված մեծ հանդիսություն, ուր, մեծաքիվ արվեստասերների ներկայությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ երախտաշատ արվեստագետին Մայր Եկեղեցու կողմից յուրովի շնորհավորելու եւ գնահատելու մասին։

Հիրավի, Հայ Առաքելական Եկեղեցին առանձնակի արձագանքեց հայ երգարվեստի երախտավոր հոբելյարին։ Վեհափառ Հայրապետի կոնդակով հայկական երաժշտական արվեստին մատուցած նշանակալից ծառայությունների համար եւ ծննդյան 70-ամյակի ուրախ առիթով Հովհաննես Չեքիջյանին շնորհվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսության բարձրագույն պարգեւներից մեկը՝ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանը։

Փետրվարի 14-ին, Տյառնընդառաջի օրը, հավարտ Սուրբ եւ անմահ Պատարագի, Մայր Աթոռի Վեհարանում, ներկայությամբ հոգետրականաց դասի, մեծաքիվ երաժիշտների, գրողների, նկարիչների, ինչպես նաեւ մշակույթի այլ գործիչների ու հրավիրյալների, տեղի ունեցավ շքանշանի հանձնման շնորհանդեսը։ Հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանի կողմից հանդիսավորաբար մեկ անգամ եւս ընթերցվեց Հայրապետական կոնդակը եւ ապա, ձեռամբ Մայր Աթոռ Սուրբ

Էջմիածնի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, մաեստրոյին հանձնվեց Հայոց Եկեղեցու պատվավոր շքանշանը: Սրբազան Հայրը, շնորհավորելով Հովհաննես Չեքիջյանին, միաժամանակ նշեց այն մեծ ավանդը, որ ներդրել է նա հայ երգի պանծացման, երգարվեստի հարստացման ու զարգացման գործում:

Հոբելյարին ի սրտե շնորհավորեցին եւ ստեղծագործական հետագա նորանոր հաջողություններ մաղթեցին Մայր Աթոռի միաբան գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ, ժողովրդական նկարիչ, ակադեմիկոս Գրիգոր Խանջյանը:

Շնորհակալանքի ու երախտիքի խոսք ուղղելով ներկաներին՝ երգարվեստին նվիրաբերած իր գործունեությունն այդքան բարձր գնահատելու համար, մաեստրո Չեքիջյանը բարեմաղթանքներ հղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ խնդրելով ներկաներին համատեղ աղոթել Նորին Սրբության շուտափույթ ապաքինման եւ Մայր Հայրենիք վերադառնալու համար:

Շնորհանդեսի վերջում, ի պատիվ Հովհաննես Չեքիջյանի, Վեհարանի հյուրասրահում տեղի ունեցավ նաեւ պաշտոնական ընդունելություն:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ